

ԱՆՑԲ ԵՒ ԱՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԻՆ ԳԱՆՁԱԿԱՅ.

Զայսպիսեաց իգրաւոր բան մեռնարկիէ՛ յաւետ վա-  
յելուք է բնակչաց տեղւոյն, կամ հետաքրքրութեամբ  
իմն անձամբ շրջագայողաց, որք բաւեն բան քաղէյ  
յարձանագրութեանց, խտապանագրաց, եւս եւ իյիշա-  
տակարանաց մատենիցն եկեղեցւոյն : Իսկ որոյ եւ  
ոչ գրադարն տեսայ է, միայն հարցափորձիս, եւ  
այն սակաւուց ոմանց, ոչ քաջիկ գիտակաց, անվրի-  
պակ եւ կատարեայ բան աւանդէյ, որպիսի համարիմ  
զիմ գայս էրկ, յանճնարիցն է :

Այլ յուսամ թէ սոյն սա գրգիւ իմն տացէ հայրենա-  
սեր բնակչացն Գանձակայ, զի հոգ տարցեն զամենայն  
մասամբք, զկատարելագոյնն իզիր առնույ : Գիտե-  
լով թէ էբբեմն դժբաղ Քաղաքի իւրեանց ճնունդք  
տարածեցան յաշխարհն ամենայն, որոց որդիք եւ  
սերունդք դեռ զհայրենեացն իւրեանց աշխոյժ կրեն  
իւրտի, եւ լսել յախորժեն բան զմմանէ. առ որոց լրումն  
ըղծի մեր հատուցանեմք արդ բան սակաւամասնեայ :

ՊԹՂՈՍ Վ. ՊԵՏՐՈՍԵԱՆ  
*Կոստանդնուպոլսեցի.*

ԱՆՈՒՆՍ ԳԱՆՁԱԿ.

Սա զրի իմեզ իզիրս եւ իյիշատակագիրս բազում ուրեք  
*Բանչայ*. իՏաճկաց կոչի Կենճէ. յետ անցանելոյ առ Ռուսա,  
ընկալաւ զանունս Եղիսարեբրուպոլիս, ի1805 Ղենեարայ Լեյ-  
տենանթ զնեազ Յիցիանով արշաւեաց իԳանձակ. իղկիւնմ-  
բերէ ց4 յունուար մարտուցեալ ընդ խանին ճաւատայ,  
սպանմամբ նորա տիրապետեաց Գանձակայ. եւ անուանեաց  
զնա *Եղիսարեբրուպոլ* իպատիս կայսրունուոյն Եղիսարեբի Ալեք-  
սեովնայ, որ էր բազումի մեծի կայսերն Աղեքսանդրի  
Պողոսեան : Բայց այս անուն քաղաքիս՝ միայն իղիւս-  
նատան իգործ ածի, իսկ արտաքոյ ասին եւ լսին Գանձակ  
կամ Կենճէ :

Բիւզանդ Պատմագիր, որպէս եւ այլք իմերոց Պատմագրաց՝  
չիլեն զԳանձակ Շահաստան. այլ այն է Գավրեճ մայրաքաղաք  
յԱտրապատական աշխարհին, որ իննումն այնպէս անուանեալ  
էր. եւ իչեանոց ոմանց իսկ իգործ ածի, բայց եւ բացայայտեալ  
պարզաբանութեամբ անուանս Գավրիժու. կայր եւ Գանձակ  
զիւղ իԳեղարքունիս որպէս ցուցանի իտապանագրեն. բայց  
այժմ եւ սա անուանի Բեօս-Ամմու :

Այլ զորմէ աստ խօսիմք՝ է քաղաք Արցախոյ, զոր ոմանք  
կոչեն Գանձակ Հայոց. եւ ոմանք Գանձակ Աղուանից : Յիշա-  
տակարան ինչ զերկուսանն եւս ակնարկէ նշանակել յասելն.  
« Մայրաքաղաք տանն Աղուանից, յաշխարհին Առանայ : »  
Մայրաքաղաք ասէ, զի յետ Պարտաւայ սա եղև իշխանանկատ  
քաղաք ազգին Աղուանից. իսկ յասելն յաշխարհին Առանայ,  
տայ իմանալ զՀայաստան :

Երեւեցուցանէ Մովսէս Կաղականտուացի ընծայեալ սմա  
այդ անուն անդէն անդ իշխութեան իւրում. եւ զպատճառ ան-  
անակողութեանց նշանացի իմն ակնարկէ յասելն. « Գանձով  
շինեաց զԳանձակ : » Ապաքեն շինող սորա որդի էր Խազրա-  
տատգոսի, զոյր անուն ոչ լիշէ պատմիչը, եւ օտարագզի  
ոք էր, զիարդ հայեցի անուն տայ սմա յօժարեցաւ : Գուցէ

նմանաձայն ինչ անուն էր նորա՝ ըստ այնմ անուանեաց, եւ  
մերքս ուղղեցին առ շինութեամբն կոչեցեալ Գանձակ, զի  
բազում գանձուք շինեցաւ, կամ զի գանձք աստ կուտին  
իբերոց եւ ինանքաց երկրին :

Եւ թէ սոյն այս քաղաք է, զոյր շինութիւն Պատմիչը  
աւանդէ, հաւանեալ եմ այնու, զի զշինողէ սորա անդ զկնի,  
իզիրս Գ. իզլ. Բ. ասէ : « Եւ յետ այսորիկ արշաւանս առնէր  
յաշխարհն Սիւնեաց, զերի վարեալ զԲաղաց սանմանս. զայ  
իջանէ յԱղանէջ գաւառ յաւան մի Արքու գետ կոչեցեալ. »  
Եւ այսորիկ են տեղիք ոչ հեռակայք իԳանձակայ գաւառէն,  
կամ ինանգեհն Արցախոյ :

Իսկ զամս շինութեան քաղաքիս քաղելով իմն իրանից  
պատմիչը հնար է գտանել : « Երկերիւր եւ ուրսուն էր (ասէ)  
« րուական Հայոց, յորժամ կամեցաւ Մահման Ամիրա շահա-  
« տակել իՀոռոմս... Յետ երկից ամաց Բարոդի ոմն Ամիրա  
« եկեալ... Յետ այսորիկ եւս անցանելոյ երկուց ամաց, Բազ-  
« բատատզոս այր շամշոտ եւ անողորմ. եւ ինմին ամի սատա-  
« կեցաւ : Իսկ որդի նորին եկեալ էառ զաշխարհս սրով եւ գե-  
« րութեամբ, եւ զեկեղեցիս բազումս հրով այրեաց եւ կիզեաց :  
« Եւ զնաց իԲաղտատ. եւ անտի դարձեալ եկեալ արքունի  
« հրամանաւ, եւ գանձով շինեաց զԳանձակ քաղաք յԱր-  
« շակաշեն գաւառի : »

Եւ յետոյ իճնոնարկելն յայլ պատմութիւն, զայս րուական  
նշանակէ. « Իլնուլ կրորդ հարիւր րուոյ Հայոց : » Ուստի  
արժան է ասել, թէ յետ ուրեմն քան զՄՁԵ րուականն, եւ յա-  
ռաջ քան զՅ, բիւն շինեալ է սա. որ համապատասխան է  
րուականի Փրկչին 840 : Որով եւ լինի շինութիւն քաղաքիս  
ինազար ամաց հետէ, եւ իրազմողեմ աներածս եւ իփոխա-  
դրութեան իւրում պահեաց զնախնին իւր անուն :

ԳԱՒԱՌ ԳԱՆՁԱԿԱՅ.

Զգաւառ սորա անձանօր ասէ լինել Հ. Ղ. Ինճիճեան իՀինն  
Հայաստան յերես 510 : Զի դեռ զայնու ժամանակաւ իճնուս չու-  
նէին Հեղինակք գործոյզ զհաւասարն պատմութեան Աղուա-  
նից : Բայց եւ մեք դեռ ոչ վստահիմք համարձակութեամբ  
ասել թէ մեզ ծանուցեալ ինչ է :

Գիտեմք թէ տեղի քաղաքիդ է յԱրցախական նահանգի  
խանձանակցութեան Սիւնեաց. բայց տեսանեմք, զի Մովսէս  
Խորենացի յԱշխարհագրութեան ընդ գաւառս նահանգին Ար-  
ցախոյ ոչ լիշէ Արշակաշեն գաւառ որպէս պատմիչը գրէ  
« զԳանձակ յԱրշակաշեն գաւառի : » Որպէս եւ ոչ յետոյ Վար-  
դան եւ Կիրակոս որք եւ իտեղւոյս ոչ կարի հեռաւորք կային,  
յիշատակեն անուն զայդպիսի :

Բայց եւ ոչ իսպառ յերկուսանմ անուո զի պատմիչը Աղուա-  
նից ինարկէ քաջ գիտէր զիւրոյ երկրի գաւառաց, քաղաքաց  
եւ զիւղից անուանս, յաւանգութենէն բնակչացն եւ իյիշա-  
տակագրաց տեսալ, գուցէ ոչ յանգիտակս իկիր արկ զայդ  
անուն անյիշատակ իմերոց :

Նա զի երէ իրագաւորաց մերոց Արշակունեաց սովոր էին  
երբալ մինչեւ իԽաղխաղ անդր քան զԿուր իճմերոցս. (նե-  
րեսցի համարձակութեանս, զի իմ կարծիք են թէ Խաղխաղ է  
այժմեան մեծ զիւղն Խաղք, կամ Կաղք Փազար կոչեցեալ  
չիչիսու գաւառի, միօրեայ նեոի իՆուխեայ) : Ապա գուցէ եւ  
ոմն Արշակ բազաւոր յԱրշակունեաց, կամ Արշակ նախարար  
սովորոյր կալաւ աստ ձմերել, ուր եւ շինութիւնս ինչ արար,  
որով կոչեցաւ Արշակաշեն գաւառ, որ գուցէ եւ ազատ ինար-  
կաց գոյով, ոչ իկարգս եղաւ գաւառացն Արձախոյ յարքունի

դիւանին : Յայտմանէ է զուցէ՝ զի օրինակք Աշխարհագրութեան Խորհնացոյն անմիարան գտանին իրուումն եւ իդասակարգութեան անուանց գաւառին Արցախոյ :

Այժմոյս որ ինչ է անուն քաղաքին, նոյն է եւ գաւառին. զի անուամբս Քանձակ գնամօրեն գաւառն եւս իմանան մերքս : Իսկ առ Տաճիկս կոչի *Կեննկարասար* յաղագս օտոզանելոյ սանմանաց գաւառիս իՔանձակագետոյն եւ նովին միով անուամբ զգետն եւ զգաւառն կոչեն :

Քաւառակ մի եւս ասացին մեզ *Սամուխ* անուանեալ լինել սմա կից, եւ միացեալ այժմ, որ եւ չունի առանձին գաւառապետ : Ուստի այժմ գանձակ Քաւառ՝ Սամուխ գաւառակաւն յԱրեւելս զնայ տարածանի առ եղբր Կուր գետոյն. ինարաւոյ ունի զՉարարերդ . իսկ յարեւմուտս իվեր ելեալ առ ծայրիւք Արրուն, Քեֆեզ եւ Սօր լերանց ոչորեալ իջանէ իՄեղրացն Գեղարքունոյ. ինիսիւսոյ ունի գՔարտման եւ գՔաշախար :

ԳԱՆՉԱԿԱԳԵՏ.

Ինարաւ կուսէ Արրուն լերին բոլիւսայ ջուր, եւ առանկեալ այլեւայլ ջուրքք, յորոց բազումք են գաղտնի ոտք ծովակին Քեղամայ, բաւական զետակ կազմի յամարան : Չճանապարհայն նախ ընդ միով փայտակերտ կամբջաւ, եւ ապա ընդ քարաշեն անցեալ, յետոյ զբոլիւսմն ինչ վատ ջրոյ առնալ գայ մտանէ ընդ մեջ նորոյն Քանձակայ, լերկուս բաժանեալ զնա : Անդ եւս ընդ նոյնպիսի կրկին կամբջուր անցեալ

զնայ ինին եւ յաւերակն Քանձակ եւ համայն զփայտն ոտոզեալ՝ շնու բարութեամբք զերկիրն : Ապա զՔոչխարա եւ զՍամուխ բաժանեալ իջանէ իԿուր : Յայս զետ եղանին ձկունքն Փիչխույ, Կարմրախայտ եւ Կոզակ :

Ակունք այսր Քանձակագետոյ բոլիւսայ իլերանց՝ են պատուական, բայց այն ինչ ժամեւերկուս մնայ հատանել մտանել իքաղաքն, յափն անդ գետոյն ջուր իմն բոլիւս սեւորակ, գարշահոտ, դառնահամ եւ անընդմեջ զեղեալ իզետն, վատբարացուցեալ ապականէ զամենայն զգետն, բայց տակաւին առ կարօտութեան՝ աստի ըմպեր քաղաքն, քէ եւ վնասակար :

Քաղաքապետ ոմն իմուսաց առ բարերարել քաղաքին, կոչէ գՔաւիք եպիսկոպոս վանանայր Չարեաք Անապատին զիտելով քէ նա եւ Փիեցիք ժողովուրդք նորա վարժ եւ փորձ են յայսպիսի ձեռնարկ. առաջարկէ նմա ածել զոմանս իճարտարացն Փիեցուց, եւ իւրով վերակացութեամբ տալ վաստակել. զի կամ խցցեն զակն այդր ջրոյ, կամ խտորեցուցեն առ չնսելոյ իզետոյ : Խոստանայ ծախել իսկ առ այն ց1000 մանէք :

4829. Աձէ Գաւիք եպիսկոպոս իՓիլայ զճարտարագոյնս, եւ ճգնին բազմօք. այլ ամենայն փորձք եւ աշխատութիւնք նոցա քէ իխտորեցուցանել, եւ քէ առ գառաջս ունել իզերեւելանն : Մինչեւ յետոյ Քաղվերանեան տոնմակաւնքն ածին իքաղաքս զայլ ջուր բաւական առ ջրբմբութիւն համօրեն քաղաքին. զորմէ յետոյ զբեսցուք իխօսել յառանձնակ պատմութիւնս տոնմից ինչ երեւելեաց քաղաքիս :

Հ Ա Յ Կ Ա Չ Ե Ա Ն Ս Ո Ւ Ի Հ Ա Ն Գ Ա Կ .

ԹՈՒՂԹ ԱՄԵՆԱՊԱՍԻԻ ՆԱԽԿԻՆ ՊԱՏՐԻԱՐԿ

Մ Ա Տ Ք Է Ո Ս Ա Ր Ք Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս Ի .

Կոստանդնուպոլսոյ նախկին Պատրիարք Ամենապատիւ Սրբազան Մատրեոս Արքեպիսկոպոսն սիրոյ եւ օրհնութեան յետագայ պատուական գիրն ստացանք, որ ինչպէս մեզ՝ անտարակոյս եմք որ նոյնպէս նաեւ մեզի հետ ազգին յառաջադիմութեանը աշխատող ճշմարիտ ազգասիրաց սփոփանք, եւ յառաւելութիւն ազգապայծառ վաստակոց խրախոյս եւ յորդոր կըլլայ :

Ամենապատիւ Սրբազանը հաճեր է ինքնայորդոր սիրով նաեւ յուղարկել առ մեզ ընծայ բարբ ԽԱՐԳ ԷՒ ԲԱՐԻ ՔՐԻՍՏՈՆԵՍՅ անունով երկասիրութիւնը, որուն պատուականութիւնը արդէն ազգային լրագիրք ծանուցին, եւ որուն վրայ մեր եւս կուզեմք մեր ընրերցողաց պատշաճ ծանօթութիւնը տալ յաջորդ բերբով :

« ԱՅ Գ ԵՐ Ա Պ Ա Ս Ի Ի Է Ի Բ Ա Չ Մ Ա Ր Գ Ի Ի Ն Ս Ի Բ Ե Լ Ի Ս Ե Ր Լ Ե Ս Մ Ե Ր Լ Ե Ն ԶՈ Գ Չ Ա Ն Ճ Ա Ս Ս Ա Ր Ի Ս Կ . Բ Ե Ն Ո Ւ Ի Դ Ո Ւ Ն . Ա Մ Բ Ե Ր Ո Ս Ո Ս Ե Ի ԹՈՒՂԵ . Ե Ն ՈՐ Չ Ա Պ Ե Ր Ն Վ Ա Ր Գ Ա Պ Ե Ս Գ Ա Յ Ա Ս Ե Ա Ն Ի Ս Ե Ր »

*Արժանապատիւ եւ Հոգեւորագոս եղբարք մեր Սիրելիք յՏէր .*

« Ոչ սակաւ բերկրութիւն սրտի եւ հոգւոյ նուիրելի փութացայք առ լրութիւն ողջամիտ Ազգայնոց մերոց՝ այն ինչ յայտ յանդիման ամենեցուն իճշմարտասիրութեան յուսաշաւիղ ձանապարհ արիաբար բերանալ ջուրցիք իբարեկրօն յԱնձիմն Չեր պատուականութեան : Եւս եւ զնոյն փայլեցուցանել ձգնիք սրտի մտօր ըստ ամենայնի յուսացեալ յամենագօր շնորհս սուրբ Հոգւոյն :

« Եւ ոչ այսչտի միայն՝ այլ եւ քաջաւետ տրնութեամբ ջանասիրիք գանշիջանելին ճրագ ճշմարտութեան եւ ուղղափառութեան կարուղիքի եւ առաքելական սուրբ եկեղեցւոյն մեր՝ ոչ բնաւ երբէք ծածկել կամ բազուցանել ընդ գրուանաւ աջառութեան եւ կողմնակցութեան, շահասիրութեան եւ անհոգութեան, այլ յուեաւ փութասիրիք դնել յերեւան եւ անպատրքւակ կացուցանել յաշտարակի բարձրանայն եւ անվեհեր յայտնաբարբառ բարոգութեան, որպէս իսկական բարոզիչ բանին ճշմարտութեան. որով յիրաւի գերանութեանն ընդունիցիք զամենացանկային Պսակ :

« Նա մանաւանդ համբերատար ոգւով յաղորդ հանդիսանայք հակառակասիրացն անխիղճ յարձակմանց՝ համանմանեալ Սրբազան Անօրոյն ընտրու-